

24 Սեպտեմբեր

Գերմանիայէն պաշտօնեայ մ'ալ պիտի գայ, արտաքին գործոց նախարարութեան խորհրդականի պաշտօն վարելու համար:

Ելմտականի համար Գերմանիայէն եկած միւս պաշտօնեայն առաւօտէ մինչեւ երեկոյ Պանք Օթօմանի մէջ *քօնսօլիտներու* կտրօնները կը համրէ, եւ կ'ըսուի թէ հազիւ երկու տարուան մէջ կարող է աւարտել այս պաշտօնը...: Անշուշտ միւս գալիք պաշտօնեային ալ ծրագիրներ համրել պիտի տայ Բ. Դուռը...:

Փոխանակ այսպէս պաշտօնեայներ բերելու Գերմանիայէն, աւելի լաւ չլինի՞ ր, որ մեր բոլոր գործերը Բիսմարք իշխանին յանձնենք...:

28 Սեպտեմբեր

Սովելոց Մասնաժողովոյ անդամներն մեծ անձնանուիրութեամբ եւ գոհողութեամբ կաշխատին Հայաստանի սովեալներուն վիճակն ձմեռուան եղանակին մէջ ալ ապահովելու համար:

Մեծ շնորհակալութեան եւ գովեստից արժանի են յիշեալ Մասնաժողովոյ բոլոր անդամներն, որոնց մին թեպէտեւ միշտ գրաբար կգրէ Մասնաժողովոյ յայտարարութիւնները:

Այս սովէն գրաբար լեզուն բաւական օգուտ քաղեց. եթէ շատ մը մարդեր սովէն մեռան՝ մեռեալ մ'ալ սովէն յարութիւն առաւ, գոնէ լրագիրներու մէջ քանի մը օրուան համար:

29 Սեպտեմբեր

Բ. Դուռն վերջապէս որոշեց Տուլչինիօն Գարատաղի յանձնել եւ այս խնդիրն լմնցնել:

Բայց տեսնենք, որոշումը պիտի գործադրէ՞. խնդրոյն ամենէն կարեւոր կէտն աս է:

30 Սեպտեմբեր

–Հայրիկ, քերականութիւնն ուղիղ խօսիլ չսորվեցնե՞ր:

–Այո՛, տղաս:

–Ինչո՞ւ ուրեմն լրագիրներէն ոմանք ուղիղ չեն խօսիր...